ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ
2024 Թ. ԱՊՐԻԼԻ 23-ԻՑ 26-Ը ԼԻՏՎԱՅԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

1. **ԳՈՐԾՈՒՂՎԱԾ ԱՆՁ**

   Խաչիկ Սողոմոնյան
   Լիլիթ Սարոյան
   Մարիա Ազարյան
   Արայիկ Ստեփանյան
   Արմինե Ստեփանյան

2. **ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ՎԱՅՐԸ/ԺԱՄԿԵՏԸ**

   Լիտվայի Հանրապետություն, ք. Վիլնյուս, 2024թ. Ապրիլի 23-ից 25-ը:

3. **ՀՐԱՎԻՐՈՂ ԿՈՂՄԸ**

   Լիտվայի տրանսպորտային անվտանգության վարչություն:

4. **ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ՆՊԱՏԱԿԸ**

   «Անվտանգ տրանսպորտային համակարգ Հայաստանում» ծրագրի ավտոմոբիլային տրանսպորտի բնագավառում փորձագիտական ճանաչողական այց, մասնավորապես՝ վտանգավոր բեռների փոխադրման /ADR/, տախոգրաֆ քարտերի թողարկման և արհեստանոցների աշխատանքների կազմակերպման, տեխնիկական զննության գործունեության կազմակերպման և վերահսկման բնագավառներում փորձի փոխանակման, ՀՀ-ում Որակի Խարտիայից բխող ազգային օրենսդրական իրավական ակտերի նախագծերի քննարկման շրջանակներում:

5. **ՔՆՆԱՐԿՎԱԾ ԹԵՄԱՆԵՐԸ**

   Ավտոմոբիլային տրանսպորտի բնագավառի լիցենզավորում՝ գործընթաց, կարգավորում, գործնական իրականացում, վարորդների և տրանսպորտային մենեջերների ուսումնական գործընթացի կազմակերպում, բեռնափոխադրման թույլտվությունների համակարգ՝ թույլտվությունների տրամադրման գործընթաց, կարգավորում, գործնական իրականացում, տախոգրաֆ քարտերի տրամադրման գործընթացի ուսումնասիրություն, տրանսպորտային միջոցների տեխնիկական զննության իրականացման գործընթացի ուսումնասիրություն և հսկողական մեխանիզմների կատարելագործում, ՀՀ-ում Որակի Խարտիայից բխող ազգային օրենսդրական իրավական ակտերի նախագծերի քննարկում:

6. ՀԱՆԴԻՊՈՒՄՆԵՐԸ, ԵԼՈՒՅԹՆԵՐԸ, ԲԱՐՁՐԱՑՎԱԾ ԿԱՄ ՔՆՆԱՐԿՎԱԾ ՀԱՐՑԵՐԸ

Հանդիպումներ Լիտվայի Հանրապետության տրանսպորտային անվտանգության վարչությունում, այցելություն տեխնիկական զննության կայաններ և մասնավորապես տեխնիկական զննության կայանների ասոցիացիա, քննարկումներ ասոցիացիայի «ADR» ուսումնական կենտրոնում, «Մերսեդես» ընկերության արհեստանոցում տախոգրաֆ քարտերի արտադրության կազմակերպման, վերանորոգման և այլ խնդիրների քննարկում, գործնական և տեղում ծանոթություն Լիտվայի տրանսպորտային անվտանգության վարչության կողմից իրականացվող գործառույթներին, Որակի խարտիայի շրջանակում Ավտոմոբիլային տրանսպորտի միջազգային միության ակադեմիայի «IRU» ներկայացուցիչ Տատյանա Յակինայի, Լիտվայի տրանսպորտի նախարարության ներկայացուցիչ Ստանիսլավաս Լինգուսի, Լատվիայի ավտոմոբիլային տրանսպորտի վարչության միջազգային փոխադրումների համակարգման վարչության ներկայացուցիչ Ինդրա Գրոմուլեի մասնակցությամբ ՀՀ ազգային օրենսդրական ակտերի նախագծերի քննարկում, լրամաշակում:

7. ՀԱՆԴԻՊՄԱՆ ԿԱՄ ՀԱՎԱՔԻ ԺԱՄԱՆԱԿ ԸՆԴՈՒՆՎԱԾ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ, ՊԱՅՄԱՆԱՎՈՐՎԱԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ, ՍՏՈՐԱԳՐՎԱԾ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԸ

Պայմանավորվածություն է ձեռք բերվել ՀՀ-ում Որակի Խարտիայից բխող ազգային օրենսդրական իրավական ակտերի վերջնական տարբերակները փորձագիտական եզրակացության ներկայացնել Լիտվայի տրանսպորտային անվտանգության վարչությունը և Ավտոմոբիլային տրանսպորտի միջազգային միության ակադեմիային «IRU», համատեղ իրականացնել միջազգային բեռնափոխադրումներ իրականացնող կազմակերպությունների մենեջերների և վարորդների ուսուցման ծրագրերի մշակումը, ուսումնական կենտրոնների արտադրական բազայի կահավորման, քննությունների անցկացման էլեկտրոնային համակարգերի մշակումը, համատեղ կազմակերպել տրանսպորտային միջոցների տեխնիկական զննության գործունեության բնագավառում ներգրավված սուբյեկտների գործունեության կանոնակարգումը, ՀՀ-ում վտանգավոր բեռների փոխադրման և պրոֆեսիոնալ վարորդների վերապատրաստման գործընթացը:

8.ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ, ԴՐԱՆՑ ԸՆԹԱՑՔ ՏԱԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԱՌԱՋԱՐԿՆԵՐԸ՝ ԵՂԱՆԱԿԸ, ՁԵՎԸ, ԺԱՄԿԵՏՆԵՐԸ, ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒՆԵՐԸ, ԱԿՆԿԱԼՎՈՂ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ

Ակնկալվում է շարունակել Լիտվայի տրանսպորտային անվտանգության վարչության փորձի ուսումնասիրությունը, առցանց եղանակով մինչև 2024 թվականի մայիսի 20-ը ավարտել ՀՀ-ում Որակի Խարտիայից բխող իրավական ակտերի մշակման և հաստատման գործընթացը, 2024 թվականի ընթացքում ավարտին հասցնել միջազգային բեռնափոխադրումներ իրականացնող

կազմակերպությունների վարորդների և մենեջերների ուսուցման ուսումնական կենտրոնների կազմավորումը, ուսումնական ծրագրերի մշակումը և փորձաքննությունը Լիտվայի տրանսպորտային անվտանգության վարչության կողմից:

9.ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ, ԱՄՍԱԹԻՎ

02.05.2024թ.

Խաչիկ Սողոմոնյան

Լիլիթ Սարոյան

Մարիա Ազարյան

Արայիկ Ստեփանյան

Արմինե Ստեփանյան